ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2019 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1 որոշմամբ և հրապարակվում է
"Գնումների մասին" ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/4»

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար շարժիչի յուղերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/4» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2019թ. նոյեմբերի 6-ին ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 2019թ. նոյեմբերի 8-ին տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում N 1. Չափաբաժին 1
Տես կից ֆայլը

Պարզաբանում N 1.
Տես կից ֆայլը

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/4» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Աշոտ Գրիգորյանին:

Հեռախոս՝ 010-29-44-18:

Էլեկտրանային փոստ՝ «a.grigoryan@mil.am»:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/4» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով

Հարգելի գործընկեր,

Քանի որ Ռուսաստանի Դաշնությունում, իրենց հավաստմամբ Մ-16ԻԽՊ-3 (ГОUS 25770-83) շարժիչի յուղ արտադրող միակ՝ ПАО НК Роснефть-МЗ Нефтепродукт ընկերությունը հաստատում է, որ նշված յուղը չի մտնում ՌԴ ՊՆ-ի Սպառազինության, ռազմական և հատուկ տեխնիկաներում օգտագործման թույլատրված վառելիքի, յուղերի, քսուքների, հատուկ հեղուկների, կոնսերվացիոն նյութերի միջոլորտային սահմանափակ ցուցակում (МОП-1313500-01-2016) նշված ապրանքատեսականու մեջ և ըստ այդմ էլ չի կարող ունենալ նաև ՌԴ ՊՆ ռազմական ներկայացուցչության կողմից որակի երաշխիքի հավաստագիր (քանի որ դրա առկայությունը, ըստ իրենց, պարունակում է կոռուպցիոն ռիսկեր), խնդրում ենք վերանայել տեխնիկական բնութագրում նշված տվյալ սահմանափակումը:

ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԶՈՒ ԹՎ ՀՎ և Վ ծառայության կողմից ուսումնասիրվել են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ- ԲՄԱՊՁԲ -20-7/4» ծածկագրով մրցույթին ներկայացված մատակարար ընկերության կողմից Մ16 իխպ 3 տեսակի յուղի տեխնիկական բնութագրում սահմանափակումները վերանայելու պարզաբանման հայտը՝ հայտնում եմ, որ մեր կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում սահմանափակումներ չկան՝ անհրաժեշտ է ներկայացնել ՌԴ ՊՆ ռազմական ներկայացուցչության կողմից որակի երաշխիքի հավաստագրի առկայություն, կամ ՌԴ ՊՆ 25-րդ գիտահետազոտական ինստիտուտի եզրակացություն:

ՀՀ ԶՈՒ ԹՎ ՀՎ և Վ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 1-ԻՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

գնդապետ Ա. ՄԿՐՏՉՅԱՆ